

Եկեք զրուցենք ընտանեկան հարցերի շուրջ Ներերկրային Հաղողակցության փաթեթ



Այս փաթեթը ստեղծվել է միջազգային փոքրիկ թիմի կողմից, ովքեր շարունակում են համագործակցել ծառայելու ավելի մեծ ուղղությամբ, որն իր ներդրումն է ունենում ամբողջ աշխարհով մեկ ընտանեկան կապերը ամրապնդելու գործում: Այս ընտանեկան ծրագրով զբաղվող թիմը կազմում է Երեխաների Համաշխարհային Փորումի մի մաս, որն աշխարհին ծառայում է 2008թ և որը մշտապես հետևյալ հարցադրումն է անում. «Ի՞նչ արդյունքների կարող ենք հասնել համատեղ ուժերով, և ինչին կարող ենք հասնել անհատապես»:

Հավելյալ տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ կայքը՝ www.letstalkfamily.org:
Հարցերի դեպքում կարող եք կապվել մեզ հետ հետևյալ էլեկտրոնային փոստով՝ info@letstalkfamily.org:



Շնորհակալ ենք ձեր երկրի տարբեր ծայրերից ազդեցիկ և եռանդուն մարդկանց հյուրընկալելու և օժանդակելու համար, որը հնարավորություն է տալիս ընտանեկան հարցերի շուրջ խոսել:

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Որպես համաշխարհային փոքր թիմ, մենք գիտակցում ենք, որ ընտանիքները շատ տարբեր են իրենց մեծություններ, կառուցվածքով, արժեհամակարգով, մշակույթով, լեզվով, կարիքներով և այլն: Մենք նաև հավատում ենք, որ ժամանակակից ընտանիքների առջև ծառայած խնդիրների լուծումները գտնվում են տվյալ երկրի մարդկանց մեջ: Ընտանիքները կամրապնդվեն համատեղ կյանքի համփորդությանը նվիրված լինելու, միմյանց և Աստծուն լսելու միջոցով, ինչպես նաև միասին աշխատելով արդյունավետ նախաձեռնությունների վրա:

Մեր երազանքն է տեսնել նույնատիպ մշակույթ և լեզու ունեցող մարդիկ, ովքեր երկրով մեկ գործունեություն կծավալեն օգնելու ամեն երեխայի ի վերջո գտնել Հիսուսի պատմած լիարժեք կյանքը: Յուրաքանչյուր Ներերկրային Հաղորդակցություն կդառնա Համաշխարհային Հաղորդակցության մաս, ինչն էլ իր հերթին կդառնա ընտանիքի զարկերակը: Եվ դա մեզ թույլ կտա հետևել զարկերակի բնականոն պուլսացիային:

Այս գործընթացի միջոցով մենք երազում ենք ունենալ մի ծրագիր, որտեղ եկեղեցին կօժանդակի ընտանիքներին և տնտեսություններին իրականացնել Աստծո նախագիծը կյանքի և հավատքի ձևավորման վերաբերյալ:



Ժամանակն է

ԸՆՏԱՆԻՔԸ . . . տուն է.

- Կյանք փոփոխող, հավատք ձևավորող և առաքելություն ունեցող կենտրոն կերտելու Աստծո թագավորությունը
- Տարբեր տարիքի մարդկանց խումբ, սովորաբար կենսաբանորեն իրար հետ կապված, երբեմն միասին և երբեմն էլ առանձին ապրող:

Առողջ ընտանիքները ձևավորում են առողջ համայնքներ:

ԸՆՏԱՆԻՔԸ . . . համայնքն է.

- Աստծո ընդարձակ ընտանիքի (հավատքի համայնք) կենսական դերն է խրախուսել ընտանիքներին լինել աշխարհի աղն ու լույսը
- Տարբեր տարիքի մարդկանց խումբ կապված հարաբերություններով, աշխարհագրական տեղանքով և հավատքով

Եկեղեցին ընտանիք է, այլ ոչ թե միջոցառում:

Աստծո նախագիծն է, որ ամբողջ կյանքի ընթացքում հավատքը սնուցվի և ապրեցվի տան և համայնքի համագործակցության և փոխազդեցության միջոցով: Ընտանեկան ծառայությունը պարզապես ընտանիքների համար ծառայությունն չէ: Ընտանեկան ծառայությունը ընտանիքի հետ և ընտանիքի ներսում իրականացվող ծառայությունն է: Հավատքը ձևավորվում և ամրապնդվում է, երբ ընտանեկան համայնքին շատ հնարավորություններ են ընձեռվում ապրելու կյանք ֆրիստոսով:



ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

- Ընտանիքները մեր հասարակության հիմնասյունն են, այնուամենայնիվ հաճախ ընտանիքները ամուր չեն և շատ ընտանիքներ տառապում են:
- Մեք ապրում են կոտրված աշխարհում, որը լի է կոտրված ընտանիքներով և սրտերով: Չափազանց շատ ընտանիքներ դժվարանում են գտնել Հիսուսի պատմած լիարժեք կյանքը:
- Ընտանիքները չափազանց տարբեր են այսօր և անկախ «ընտանիք» տերմինի սահմանման այս ազգում միասին ապրող մարդիկ տարբեր բնագավառներում հանդիպում են տարբեր դժվարությունների:
- Ազգերի և համայնքների վերակառուցումը սկսվում է ընտանիքների և նրանց երեխաների վերափոխմամբ՝ վերադարձնելով նրանց հույսը և կյանքը:

ՆՊԱՏԱԿՆ Է

հավաքել ազդեցիկ քրիստոնյա առաջնորդներ՝ սկսելու Հաղորդակցություն և միասնական հանապարհ դեպի ընտանիքների համար ավելի լավ ապագա :

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ԵՆ.

- Սա հաղորդակցություն է և ոչ թե կոնֆերանս
- Եղիր ստեղծագործ մարդկանց մտքերը ըմբռնելու այնպես, որ ամեն մի ձայն լսելի լինի:
- Ոչ մի լոգոտիպ, ոչ մի գովազդ, ոչ մի ծածուկ նպատակ
- Սա գործընթաց է լսելու՝ միմյանց, մեր համայնքի ձայները և Աստուծունեկեք միասին երազենք և պայքարենք, որպեսզի ընտանիքներն ունենան ավելի լավ ապագա
- Առաջնորդները հրավիրված են կիսելու իրենց փորձը և եռանդը, հետագա փոփոխությունների համար զարգացնելու երկարատև, գործնական հնարավորություններ :

ՀՆԱՐԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մինչ Հաղորդակցությունը կտա սպասված որոշակի արդյունքներ, որոշ արդյունքներ կլինեն անակնալ՝ համախմբելով մարդկանց և թույլ տալով, որ Սուրբ Հոգին առաջնորդի, ոգեշնչի և ուղղորդի: Ինչևէ կարող ենք ունենալ հետևյալ արդյունքները՝

- Ընտանիքներին և նրանց երեխաներին հրատապ օժանդակելու հստակ գիտակցում
- Ընտանիքի և հասարակության կենսական դերի գիտակցում
- Նոր կապերի ձևավորում
- Միասնական նախաձեռնություններ (քաղաքական, հասարակական, տնտեսական, հոգևոր...)
- Տվյալ պահին հասանելի ռեսուրսների վերահսկում
- Պատմված պատմությունների, գաղափարների և գործնական ռազմավարությունների ներդրում համաշխարհային համայնքի մեջ



Ա. Ստեղծել ղեկավարող թիմ

1. Տալ «Ներերկրային Հաղորդակցության սահմանումը» : Արդյո՞ք այն պետք է ներկայացնի ձեր երկրի բոլոր տարածաշրջանները: Ռեգիոնա՞լ հաղորդակցություն: Ենթառեգիոնա՞լ հաղորդակցություն: Մեկ երկրում բազմաթի՞վ հաղորդակցություններ: Միայն քրիստոնյանե՞ր:
2. Յուրաքանչյուր երկրում ձևավորել ծրագրող թիմ: Ապահավել այնպիսի մարդկանց մասնակցությունը, որոնք
 - Մտահոգ են իրենց ընտանիքով
 - Ունեն լավ կապեր և ազդեցիկ են
 - Բավարար ժամանակ կներդնեն այս Հաղորդակցության հաջողության համար
3. Ծրագրող թիմին առաջարկվում է փնտրել
 - 5-8 մարդ
 - Մի շարք կազմակերպությունների և համայնքների ներկայացուցիչներ
 - Բազմաբնույթ հմտությունների տեր մարդկանց, որոնք իրենց ներդրումը կունենան գործընթացի մեջ (մարկեթինգ, ադմինիստրացիա, կապերի հաստատում)
 - Կարևոր է փնտրել թիմի առաջնորդ
4. Ծրագրող թիմը պետք է նրբորեն հետազոտի և հաշվի առնի այն, ինչ տեղի է ունենում իրենց ազգում, որպեսզի որոշում կայացնեն, թե երբ խոսակցությունը պետք է տեղի ունենա: Օրինակ կարող եք հետաձգել ձեր Հաղորդակցությունը պատվիրակների հետ:
5. Պլանավորեք ժամանակը, տևողությունը, արժեքը
6. Արդյո՞ք հաղորդակցությունը կունենա տեղական ֆինանսավորում, թե՞ մասնակիցները կներդնեն, թե՞ երկուսն էլ:
7. Կազմել ռազմավարական մարդկանց, կազմակերպությունների ցանկ, որոնք պետք է ներկայացվեն
8. Հրավիրեք մարդկանց՝ տալով Հաղորդակցության մասին հիմնական տեղեկատվությունը, որպեսզի նրանք պատրաստ լինեն
9. Կազմեք Հաղորդակցության օրակարգը
10. Ներգրավել անհրաժեշտ մարդկանց միջոցառումը հյուրընկալելու համար
11. Ապահավել Հաղորդակցությունը անհրաժեշտ սարքավորումներով
12. Հաշվետվություններ ներկայացնել ԵՀՖ ընտանեկան ծրագրային թիմին

Բ. ՀՐԱՎԻՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Կարևոր է սկսել գործընթացը մտքում ունենալով այնպիսի ավարտ (կախված ձեր Հաղորդակցության տիպից), որի արդյունքները թույլ կտան տվյալ երկրում հասնել հրավիրված մարդկանց կյանքերի վերափոխման:

- Հրավիրեք այնպիսի մարդկանց, ովքեր կկազմեն մի խումբ, որը կներառի ոչ կառավարական կազմակերպություն, որդեգրության կազմակերպություններ, եկեղեցու առաջնորդներ, կառավարության անդամներ, առողջապահական համակարգի ներկայացուցիչներ, խորհրդատուներ, սոցիալական աշխատակիցներ և ընտանեկան ծառայության մեջ ներգրավվածներ:
- Տեղեկացրեք վերոնշյալ մարդկանց Հաղորդակցման հնարավորության մասին:
- Հրավիրեք նրանց միջոցառմանը:

Գ. Պլանավորել Ծրագիրը

- Կատարեք հետազոտություններ տվյալ երկրի առանցքային հարցերի շուրջ և ներկայացրեք թարմացված վիճակագրություն կապված ընտանիքի, ընտանեկան բաժանումների և ընդհանուր առմամբ հասարակական դժվարությունների հետ:
- Ընտրեք հեղինակային անձ, ով կկարողանա ներկայացնել վիճակագրությունը պատշաճ ձևով
- Ընտրեք հաղորդակցման հստակ նպատակները, որպեսզի հրավիրեք հիշատակ մարդկանց
- Ծրագրի մի օրինակ կցված է: Կազմեք ձեր ծրագիրը ձեր ժամանակին և ենթատեքստին համապատասխան:
- Առանցքային հարցեր միասին անցկացրած ժամանակ քննարկելու համար:
Օրինակ՝
 - Ի՞նչ տեսք ունի առողջ ընտանիքը:
 - Որո՞նք են այն գործոնները, որոնք խոչընդոտում են ընտանիքների առողջ զարգացմանը:



ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Դուք հեշտուխյամբ կարող եք կորցնել Հաղորդակցման կարևոր կետերը՝ փորձելով տալ ընտանիքի սահմանումը: Ձգտելով ունենալ Աստծո սահմանած կատարյալ ընտանիքը, կարևոր է գիտակցել, որ Նրա սահմանած ընտանիքի մոդելը խախտվել է: Անկախ ընտանեկան կառույցից մենք ուզում ենք տեսնել ավելի բարձր ֆունկցիոնալություն, որը կօգնի բոլոր երեխաներին գտնել լիարժեք կյանք: Այս մոտեցումը չի փոքրացնում «ընտանիք» գաղափարի կարևորությունը: Այն հանուն փոփոխությունների կենտրոնանում է գործնական նախաձեռնությունների վրա:

ԲԱԺԻՆ Գ. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀԵՇՏԱՑՈՒՄ

- Սա Հաղորդակցություն է այլ ոչ թե կոնֆերանս, ուստի միջոցառման հեշտացումը շատ կարևոր է
- Թույլ տվեք, որ միջոցառումը ընթանա այնպես, ինչպես հրավիրվածներն են ակնկալում խիստ օրակարգով չսահմանափակվելով, բայց որպեսզի հաղորդակցման հիմնական կետերից շատ շեղումներ չլինեն
- Առաջնահերթությունը տվեք գտնելու համապատասխան խոսնակ՝ հիշելով, որ ձեզ անհրաժեշտ է մի մարդ, ով կկարողանա առաջնորդել Հաղորդակցությունը՝ աշխատելով իրականացնել բոլոր ծրագրավորած զրույցները
- Ձեր Հաղորդակցության համար նշանակել ունակ մատենավարի և վստահ լինել, որ ամեն իմբում կա գրառումներ կատարող անձ
- Ճանապարհը և նշանակետը այստեղ հավասարապես կարևոր են: Ուստի այն պրոցեսը, որը թույլ է տալիս մասնակիցներին ներգրավվել և աճել տեսիլքի իրականացման մեջ, կարևոր է
- Վերահսկեք հրավիրվածների մասնակցությունը Հաղորդակցությանը, որպեսզի այն ընթանա սահուն
- Խրախուսեք բոլոր մասնակիցներին բարձրաձայնել իրենց կարծիքները

(Ավստրալիական Հաղորդակցության ծրագրի օրինակ է ներառված Հավելված 1-ում, որպես ուղեցույց օգնելու ձեզ կազմել ձեր սեփական ծրագիրը:)

ԲԱԺԻՆ Դ. ԱՄՓՈՓՈՒՄ/ՁԵԿՈՒՑՈՒՄ

Շատ օգտակար կլինի, եթե դուք կարողանաք ուղարկել ձեր Հաղորդակցության հակիրճ զեկույց, որը կներառի հետևյալը.

- 5 ամենահաճախակի տրվող պատասխանները, թե ինչն է դարձնում ընտանիքը առողջ
- 5 ամենահաճախակի տրվող պատասխանները, թե ինչն է խանգարում ընտանիքներին լինել առողջ
- Ձեր Հաղորդակցությունից ինչ նախաձեռնություններ առաջացան
- Տվյալ երկրում գոյություն ունեցող բոլոր կազմակերպությունների, ռեսուրսների ցանկ, որոնք զբաղվում են ընտանեկան հարցերով
- Լուսանկարներ, կարճ վիդեոներ և ցանկացած այլ մեդիա կամ գրառումներ, որոնք կնպաստեն Համաշխարհային Հաղորդակցությանը

Բոլոր զեկույցները Ներերկրային Հաղորդակցության վերջում, 30 օրվա ընթացքում, ուղարկված բոլոր զեկույցները կարժանանան ընտանեկան հարցերով զբաղվող թիմի ծափահարություններին (ձեր պատվին շոկոլադի տուփ կբացեն):

Ձեկույցի ձևաչափը կցված է Հավելված 2-ում:

ԲԱԺԻՆ Ե. ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

1. Կարևոր է արդյո՞ք որքան մասնակից ունի միջոցառումը:
Ոչ այդքան, ավելի կարևոր է, թե ով կմասնակցի, այլ ոչ թե քանիսը:
2. Կա՞ հասանելի ֆոնդ:
Մինչև 2014թ. դեկտեմբերը կայանալիք Հաղորդակցությունների համար հասանելի որոշակի ֆոնդ: Նախընտրությունը տրվում է զարգացող աշխարհի երկրներին:
3. Կարող է արդյո՞ք լինել տարածաշրջանային Հաղորդակցություն: Կամ կարող ենք արդյո՞ք կազմակերպել մեկից ավելի Հաղորդակցություններ նույն քաղաքում:
Այո, եթե խոսքը շատ մեծ քաղաքի մասին է:



ԱՎՍՏՐԱԼԻԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՉՈՐԵՔՆԱԲԹԻ	
9:00	ԳՐԱՆՑՈՒՄ
10:00	Առավոտյան թեյ – շփում, գրույց, մթնոլորտ և ալլև
10:30	Ողջույն ներածություն, ընկերական գործողություններ և միջոցառման ընթացքի ծանոթացում
10:45	Ներկայացում #1: Նկարեք ընտանիք հասկացությունը՝ տվյալներ, կատակներ, հետազոտություններ և պատմություններ
11:15	Փոքր խմբերի անդրադարձ և քննարկումներ (5-6 անձ): «Ձեր հնարավորությունն է հաստատել, նպատել, հակադրել» տալով հնարավորություն բոլորին ներկայացված ընտանիքի պատկերին ավելացնել սեփական գաղափարները
11:45	Ամբողջական խումբ: հակիրճ զեկույց յուրաքանչյուր փոքր խմբից
12:00	Ամբողջական խումբ: Միասին աշխատել ստացված ինֆորմացիան ներկայացնելու առանցքային, հիմնական կետերով: Օրինակ՝ ծնողական հոգատարություն հայրեր և ծնողագուրկներ և ալլև: Ընտրեք ավելի քան 8 թեմա: (եթե լինեն ավելի քան 8, ապա թույլատրեք քվեարկել նախընտրելի 8-ի համար):
12:15	Փոքր խումբ: Այնուհետև պատվիրակները միանում են 8 խմբերից մեկին, որպեսզի նրանց հետ ավելի խորը քննարկեն թեման: Երբ խմբերը ձևավորվեն 1: Խմբի յուրաքանչյուր անդամ պետք է ասի, թե ինչու՞ է այս թեման իրեն հետաքրքրում: Ի՞նչ են իրենք տեսնում այս ոլորտում, որ համապատասխանում է իրենց իրականությանը: 2: Խմբերը աշխատում են գտնել 3-4 հիմնական «արմատներ» առօրյա իրավիճակներում թաքնված:
1:00	ՃԱՇ
2:00	Ներկայացում #2: Նկարել դրական պատկեր, որը կարտացոլի, թե ինչպիսին պետք է լինեն ընտանիքը՝ Աստծո սրտի երազանքը: Քանզի մենք ապրում ենք կոտրված աշխարհում, լի կոտրված սրտերով և ընտանիքներով, մենք պետք է հիշենք և ոգեշնչվենք ամբողջական հարաբերություններով, որ Աստված է ցանկանում յուրաքանչյուր ընտանիքի համար. անկախ այժմյան իրավիճակից:
2:20	Անձնական խորհրդակցության ժամ: Պատվիրակներին խորհուրդ է տրվում գտնել առանձին տարածք և առանձնանալ՝ 1 գործընթացը վերլուծելու համար 2 իրենց առջև ծառայած խնդիրների մասին ավելի խորը մտածելու համար 3 լսելու, թե Աստված ինչ է նրանց ասում 4 որոշակի առաջընթացի մասին երազելու համար
2:40	Փոքր խմբեր – Կապույտ երկինք/Քաջություն/Ստեղծագործ մտածելակերպ Մասնակիցները վերադառնում են իրենց փոքր խմբեր նրանց տրվում են դատարկ թղթեր: Առանց դրամական, ժամանակային, աշխատակիցների, տեսիլքի և ալլևի սահմանափակումների... Ի՞նչ է հնարավոր անել դրական փոփոխությունների համար:
3:10	Ամբողջական խումբ: Ցուրաքանչյուր խմբի տեսիլքի հավաքագրում: Պոստերները ամրացնել սենյակի պատերին:
3:30	ԸՆԴՄԻՋՈՒՄ
4:00	Անհատական գործողություն: Մասնակիցները մարկերներով շրջում են սենյակով մեկ և ավելացնում են սեփական խիզախ, ստեղծագործ գաղափարները այլ խմբերի պոստերների վրա:
4:20	Աղոթք: 2-4 անձից բաղկացած փոքր խմբեր աղոթում են ամփոփելով օրը:
4:30	Փակում: Շփում, ընթրիք



	ՀԻՆԳՇԱՐԹԻ
9:00	Սուրճ
9:30	Աստվածաշնչի ընթերցանություն և աղոթք
9:45	Վերահսկման սկիզբ: Սկսեք օրը նախօրոք օրը պատրաստած 8 պոստերներով: Մասնակիցերը լրացնում են բացիկներ՝ նշելով այն աղբյուրը/ուսումնականությունը, որն ըստ իրենց կնպաստի մեկ կամ ավելի խնդիրների լուծմանը, այնուհետև տեղադրում են բացիկը պոստերի վրա:
10:00	#1 խնդիրների վրա կենտրոնացում: Ընտրված պատվիրակները ներկայացնում են 3 ռոպեանոց ներածական յուրաքանչյուր 8 խնդրի շուրջ՝ կենտրոնանալով իրենց ռեսուրսների և ծառայության փորձը ձևավորող սկզբունքների վրա: Այնուհետև փոքր խմբերը քննարկում են և գրանցում առանցքային սկզբունքները յուրաքանչյուր խնդրի համար լուծումներ փնտրելիս: Այս փուլում ռեսուրսների բարձրաձայնում անհրաժեշտ չէ:(4 ռեզենտացիա/ քննարկում յուրաքանչյուրը 15 րոպե տևողությամբ)
11:00	ԱՌՍՎՈՏՅԱՆ ԹԵՑ
11:30	Երկրորդական խնդիրների վրա կենտրոնացում: 4 պրեզենտացիա/քննարկում յուրաքանչյուրը՝ 15 րոպե տևողությամբ:
12:30	Երկխոսություններ ռեսուրսների վերաբերյալ: որոշակի ռեսուրսներ և ուսումնականություն ունեցող պատվիրակները զրուցում են իրենց «անկյունն» այցելած պատվիրակների հետ:
1:00	ՃԱՇ
2:00	Ի՞նչ անել այս ամենից հետո:
	Քննարկումներ, թե ի՞նչպես լրացնել նշված խնդիրների բացերը - առաջընթացի քայլեր:



ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԶԵԿՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿ

Երկիր:

Ամսաթիվ:

Թժի առաջնորդի և պլանավորող թմի անդամների անունները և կազմակերպությունները/
դոմինացիաները:

Մասնակիցների քանակը:

Հետևյալ 5 հարցերին հաճախ տրվող պատասխանները՝

Ի՞նչն է ընտանիքը դարձնում առողջ:

1

2

3

4

5

Ի՞նչն է խանգարում ընտանիքներին լինել առողջ:

1

2

3

4

5

Ի՞նչ նախաձեռնություններ են առաջ եկել ձեր Հաղորդակցությունից:

Խնդրում ենք կցել ընտանիքների աջակցությամբ զբաղվող բոլոր կազմակերպությունների/
ոչսուրսների ցանկը:

Խնդրում ենք կցել ցանկացած ինֆորմացիա, որով կցանկանաք կիսվել մեզ հետ:

Հնարավորության դեպքում խնդրում ենք ուղարկել տեղեկատվությունը, որը հավաքագրել էք ձեր
Հաղորդակցության համար:

Շնորհակալություն: Խնդրում ենք ուղարկել այս հաշվետվությունը info@letstalkfamily.org հասցեին:



australiatalksfamily

The Conversation

A strategic gathering of people from the Australian Christian community to explore possibilities for a better future for our children and their families.



the present

- We live in a broken world filled with broken families and broken hearts.
- Too many Australian children are in families that are struggling to find the 'life to the full' that Jesus talked about.
- Families come in all shapes and forms today and, regardless of the definition of the term 'family' that may be used, children living in households in this nation are being challenged on many fronts.
- The rebuilding of our nation and communities is enabled through the transformation of these families and their children – restoring hope and life.
- Within the Christian community, many agencies, denominations, and individual churches are investing time, resources and finances into disconnected responses to this issue.

the proposal

- A 2 day gathering of influential people from across the diverse Christian community to be confronted by the challenges for children in families today and to begin a conversation and a shared journey towards a better future.
- Through a listening process – to each other, to the 'voices' of our community, and to God – let us dream together and strive together for a better future that moves beyond words and vision to practical outcomes.

the product

It is hoped that those attending will come away with a clear understanding of:

- the urgency and priority of the need to support children and their families as they engage with the complexities of life on a daily basis
- the ongoing processes coming out of the conversation and a commitment to:
 - partnering for future change
 - ongoing action within and beyond their denominational contexts which may bring influence into the spheres of politics, economics, religious and society
 - DO one tangible thing towards change
 - contribute to a virtual community for the sharing of stories, ideas and practical strategies.

the process

- Guest presentations painting the picture of what 'family' looks like across our nation today and what it could look like as we reflect on God's heart
- Small group reflection and conversation
- Work groups
- Blue sky/courageous/creative thinking spaces
- Whole group discussion
- Personal reflection time
- Practical planning steps forward

the possibility

- What might be possible if we worked together towards a more coordinated and holistic approach?
- What does God require of us for the children and their families within our nation?

the people

Leaders who have influence, experience, expertise and/or passion in serving families and children from:

- denominations
- individual churches
- from every state and territory
- para-church and mission agencies
- theological institutions

Leaders are invited to distil the vital principles and processes from their experience & ministry resources and bring these along to work together to develop long term, practical possibilities for change.

14th – 15th May, 2014

Melbourne City Conference Centre
333 Swanston Street, Melbourne ...
conveniently located in the heart of Melbourne.

UNITED NATIONS

2014 is the 20th anniversary of the UN International Year of the Family and provides a timely mandate for a renewed focus and coordinated approach to providing some urgently needed solutions.

The United Nations General Assembly, in its resolution 47/237 of 20 September 1993, proclaimed that 15th May of every year shall be observed as the International Day of Families.

COST

\$130 includes lunches, morning & afternoon teas and a dinner.

TRAVEL/ACCOM.

We are asking that travel to and from our venue as well as accommodation is the responsibility of each individual participant. See suggestions on website under: 'venue'.

MORE DETAILS

australiatalksfamily.org.au

australiatalksfamily.org.au



... ՊՈՍՏԵՐԻ ՆՄՈՒՇ

Հաղորդակցություն

Քրիստոնյաների ռազմավարական հավաքույթ, որի նպատակն է բացահայտել մեր երեխաների և նրանց ընտանիքների համար ավելի լավ ապագայի հնարավորություններ:

ՆԵՐԿԱՆ

- Մենք ապրում ենք կոտրված աշխարհում, որը լի է կոտրված ընտանիքներով և կոտրված սրտերով:
- Չափազանց շատ ավստրալիացի երեխաներ ապրում են այնպիսի ընտանիքներում, որոնք դժվարանում են գտնել Հիսուսի պատմած լեցուն կյանքը:
- Ընտանիքները չափազանց տարբեր են այսօր և անկախ «ընտանիք» տերմինի սահմանման այս ազգում միասին ապրող մարդիկ տարբեր բնագավառներում հանդիպում են զանազան դժվարությունների:
- Ազգերի և համայնքների վերակառուցումը սկսվում է ընտանիքների և նրանց երեխաների վերափոխմամբ՝ վերադարձնելով նրանց հույսը և կյանքը:
- Քրիստոնեական համայնքում շատ կազմակերպություններ, դինոմիոնացիաներ և առանձին եկեղեցիներ ժամանակ, ռեսուրսներ և ֆինանսներ են ներդնում այս հարցի ոչ կապակցված պատասխանների մեջ:

ԱՌԱՋԱՐԿԸ

- Տարբեր քրիստոնեական համայնքներից եկած ազդեցիկ մարդկանց երկօրյա հավաքույթ քննարկելու ժամանակակից ընտանիքներում երեխաների դժվարությունները և սկսելու Հաղորդակցություն և միասնական ճանապարհ դեպի ավելի լավ ապագա:
- Սկզբում միմյանց, մեր համայնքի ձայները և Աստծուն լսելու գործընթացի միջոցով եկեք երազենք և պայքարենք, որպեսզի ընտանիքներն ունենան ավելի լավ ապագա:

ԱՐԴՑՈՒՆՔԸ

Հուսով ենք, որ մասնակիցները հստակ կգիտակցեն հետևյալը.

- Ամեն օր կյանքի դժվարություններին հանդիպող ընտանիքներին և նրանց երեխաներին օժանդակելը հրատապ և առաջնային հարց է
- Հաղորդակցությունից բխող շարունակական պրոցեսները

և նվիրված կլինեն

- Համագործակցել ապագա փոփոխությունների համար
- Իրենց դինոմիոնացիայի ներսում և դրանից դուրս շարունակական գործունեությունը, որը կարող է ազդել քաղաքական, տնտեսական կրոնական, հասարակական ոլորտների վրա:
- Փոփոխության հասնելու համար անել զեթ մեկ զգալի գործ:
- Նպաստել վիրտուալ համայնքին պատմություններով, գաղափարներով գործնական ռազմավարություններով կիսվելով

ԸՆԹԱՑՔԸ

Մասնակիցների պրեզենտացիաները, թե ինչ տեսք ունի ընտանիքը այսօր և ինչ տեսք կարող էր ունենալ, եթե այն լիներ Աստծո նախատեսածի պես:

- Փոքր խմբերում քննարկում
- Ամբողջական խմբում քննարկում
- Խմբակային աշխատանք
- Անձնական խորհրդակցության ժամ
- Կապույտ երկինք/խիզախ/ստեղծագործ մտածելակերպ
- Գործնական քայլերի պլանավորում

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

- Ի՞նչ հնարավոր կլիներ, եթե մենք միասին աշխատեինք՝ ձևավորելու ավելի համակարգված և բազմակողմանի մոտեցում
- Ի՞նչ է Աստված մեզանից պահանջում մեր ազգի սահմաններում մեր երեխաների և նրանց ընտանիքների համար

ՄԱՐԴԻԿ

Ազդեցիկ, փորձառու առաջնորդներ, ովքեր սիրտ ունեն ծառայելու ընտանիքներին և երեխաներին

- Դինոմիոնացիաներից
- Եկեղեցիներից
- Միսիոներական կազմակերպություններից
- Առանձին եկեղեցիներից
- Աստվածաբանական հաստատություններից
- Յուրաքանչյուր նահանգից և տարածքից

Առաջնորդները հրավիրված են իրենց փորձից և ծառայության ռեսուրսներից առանձնացնելու կենսական սկզբունքները և գործընթացները, որպեսզի միասին աշխատեն և ձևավորեն երկարաժամկետ, գործնական հնարավորություններ փոփոխության համար:

ՄԱԿ 2014-ը Ընտանիքի միջազգային տարվա 20-րդ տարեդարձն է և տրամադրում է ժամանակային մանդատ հրատապ հարցերը նորացված և համակարգված մոտեցումներով լուծելու համար: ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան 1993թ. սեպտեմբերի 23-ի 47/237 ռեզոլյուցիայով հայտարարեց մայիսի 12-ը ընտանիքի միջազգային օր:

- Ամսաթիվ:
- Արժեք:
- Վայր:
- Ճամփորդության մանրամասներ:
- Վեբ կայք:



australiatalksfamily

14-15th May, 2014 - Melbourne

| www.australiatalksfamily.org.au



- ❖ 7,760,000 households (2011 Census)
- ❖ 5,000,000 families (ABS)
- ❖ 33% 'nuclear' families (2013)
- ❖ Couple only most common from 2014 (McCrindle)
- ❖ Rise of multigenerational households - boomerang kids (McCrindle)
- ❖ Record birth rates - 300,000 per year (McCrindle)
- ❖ Declining household size: 1911- 4.5; 2011-2.5; 2014 - 2.6 (McCrindle)
- ❖ 20% of our population are dads (4.6 million) (McCrindle)
- ❖ 156,000 single parent dads with 228,000 children (McCrindle)
- ❖ 144,000 stay-at-home dads (McCrindle)
- ❖ Generation Z - the 'Millennial Generation'
- ❖ Family violence epidemic (The Age, 2014)
- ❖ Suicide: leading cause of death among young Australians (reachout.com)
- ❖ 46,680 grandparent-headed families (AIFS)
- ❖ 4 in 10 young children in grandparent care during the week (AIFS)
- ❖ ChildCare 0-2yrs: 20% in 1984; 54% in 2014 (SMH)
- ❖ ChildCare 3-5yrs: 50% in 1984; 70% in 2014 (SMH)
- ❖ Care by non-relatives: 23% in 1984; 7.5% in 2014 (SMH)
- ❖ 339 adoptions in 2013 (1501 in 1988); 210 Aussie children (AIHW)
- ❖ Inter-country adoption process: average 5 years (AIHW)
- ❖ 65% mothers with children <15years employed in 2010 (AIFS)
- ❖ 80% of expectant mothers consume alcohol during pregnancy
- ❖ Estimated number of abortions per year 2001-2009: 80,000 (UWS)
- ❖ 39,621 Australian children living in out-of-home care in 2012 (AIHW)
- ❖ This number has risen every year over the last 10 years (AIHW)
- ❖ 123,244 marriages in 2012 (AIFS)
- ❖ 49,917 divorces in 2012; 2nd highest rate since 2000-2006 (AIFS)
- ❖ 49% of divorces involve children; 44,834 children (AIFS)
- ❖ 35% of births were ex-nuptial in 2012 (AIFS)
- ❖ 78% of marriages preceded by cohabitation in 2012 (AIFS)



ՈՐՈՇ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՑԱԼՆԵՐ

- 7,760,000 տնային տնտեսություններ
- 5,000,000 ընտանիք
- 33% «միջուկային» ընտանիքներ
- Բազմասերնդային տնային տնտեսությունների աճ; բուժերանգ երեխաներ
- Ռեկորդային ծնելիության մակարդակ – տարեկան 300,000
- Նվազող տնային տնտեսության չափս: 1911- 4.5; 2011-2.5; 2014 - 2.6
- Մեր բնակչության 20% հայրիկներ են (4.6 միլիոն)
- 156,000 միայնակ հայրեր 228,000 երեխաներով
- 144,000 չաշխատող հայրիկներ
- Սերունդ Z – Հազարամյակի սերունդ
- Ընտանեկան բռնության համաճարակ
- Ինքնասպանություն: երիտասարդ ավստրալիացիների շրջանում տարածված մահվան առաջատար պատճառ
- 46,680 երեխա, որոնք ունեն տատիկ և պապիկ
- Փոքր երեխաներից 10-ից 4-ը շաբաթվա ընթացքում գտնվում են տատիկի կամ պապիկի խնամակալության տակ
- Երեխաների խնամք 0-2տ. 20% 1984թ.; 54% 2014թ.
- երեխաների խնամք 3-5տ. 50% 1984թ.; 70% 2014թ.
- խնամակալություն ոչ բարեկամի կողմից 23% 1984թ.; 7.5% 2014թ.
- 339 որդեգրում 2013 (1501 1988թ.); (210 ավստրալիացի երեխա)
- Միջերկրային որդեգրումների գործընթաց: միջինը 5 տարի
- <15 տարեկանից բարձր երեխաներ ունեցող մայրերի աշխատանքի ընդունումը կազմել է 65% 2010թ.
- Կանանց 80%-ը հղիության ընթացքում ակոհոլ է օգտագործում
- 2001-2009թթ. աբորտի մոտավոր քանակը 80,000
- 2012թ. 39,621 ավստրալիացի երեխա ապրում են ոչ ընտանեկան խնամակալությամբ
- Այս ցուցանիշը վերջին 10 տարիների ընթացքում բարձրանում է
- 123,244 ամուսնություններ 2012թ.
- 49,917 ամուսնալուծություններ 2012թ; 2000-2006թթ-ից ի վեր երկրորդ ամենաբարձր ցուցանիշը
- 49% ամուսնալուծությունները ներառում են երեխաներ: 44,834 երեխա
- 2012-ին ծնված երեխաների 35% արտամուսնական էին
- 2012թ. զույգերի 78%-ը ապրել են միասնական կեցությամբ նախքան ամուսնությունը



ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ/ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՆՄՈՒՇ

australiatalksfamily

The resource:

I have used this material

I would rate it ___/10

or

This is my material

Website or contact details for the resource:

Your name (optional)

australiatalksfamily

The resource:

I have used this material

I would rate it ___/10

or

This is my material

Website or contact details for the resource:

Your name (optional)

australiatalksfamily

The resource:

I have used this material

I would rate it ___/10

or

This is my material

Website or contact details for the resource:

Your name (optional)

australiatalksfamily

The resource:

I have used this material

I would rate it ___/10

or

This is my material

Website or contact details for the resource:

Your name (optional)

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ/ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՆՄՈՒՇ

Ես օգտագործել եմ այս նյութը

Կգնահատեի այն /10

Կամ

Սա է իմ նյութը

Ռեսուրսի վերկայք կամ կոնտակտային տվյալները

Ձեր անունը (կամավոր):

